

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Բանալի բառեր՝ գրադարանների միջազգային գործունեություն, արտաքին մշակութային քաղաքականություն, գրադարանային դիվանագիտություն, Հայաստանի ազգային գրադարան, թվային դիվանագիտություն:

Keywords: international activity of libraries, foreign cultural policy, library diplomacy, National Library of Armenia, digital diplomacy.

Գրադարանային մշակույթի դիվանագիտությունը, որպես պետության արտաքին քաղաքականության ուղղություն, ենթադրում է գրքային գաղափարի, տեղեկատվության, արժեքային համակարգի, փաստաթղթերի, և այլ տարրերի փոխանակումը տարբեր երկրների և ժողովուրդների միջև գրադարանային գործը ամրապնդելու նպատակով: Դիվանագիտություն տերմինը կապված է հին հունարեն **diploma** բառին, որը նշանակում է երկակի ծավաժ փաստաթուղթ, իր մեջ պարունակելով պաշտոնական համաձայնագրեր, որոշումներ: 1998 թ.-ից օգտագործվել է գրադարանային դիվանագիտություն տերմինը՝ համակարգելով կապը միջազգային գրադարանային աշխատանքը պետական դիվանագիտության հետ, ապահովելով գրադարանագիտության հեռանկարներն ու ուղիները: Ժամանակակից գրականության մեջ առավել տարածված է ամերիկացի հետազոտող Միլթոն Քամինգս կրտսերի մեկնաբանությունը, համաձայն որի՝ մշակութային դիվանագիտությունը գաղափարների, տեղեկատվության, արժեքների, ավանդույթների, և մշակույթի այլ բաղադրիչների փոխանակումն է: Ընդ որում, գրադարանային դիվանագիտությունը հանրային դիվանագիտության բաղադրիչն է, և իրենից ներկայացնում է պետությունների, միջազգային կազմակերպությունների մշակութային փոխազդեցության ոլորտում ռազմավարական նպատակ ունեցող պրակտիկ գործողությունների համալիր [Игумнова, 2013, 3]: Այսպիսով՝ գլոբալացվող աշխարհում մշակույթը դառնում է միջազգային քաղաքականության ու պետության «փափուկ ուժի» կարևոր բաղադրիչը [Օհանյան, 2013, 210]: Գրադարանային դիվանագիտությունը, որպես մեթոդ առաջ է բերվել միջազգային միջավայրում գիտելիքներին և տեղեկատվությանը կապելու համար: Գրադարանային դիվանագիտության հիմնական նպատակը կարող է դիտվել նաև որպես երկրի գրադարանավարի դրական իմիջի ձևավորում: Ժամանակակից գրադարանային և տեղեկատվական ոլորտն ունի եզակի ռեսուրսներ, որոնք ներառում են տպագիր, էլեկտրոնային, վիրտուալ տեղեկատվական, և հատուկ գործիքների հավաքածու: Իրականացվում են միջազգային մշակութային տարածքում գրադարանների, գրադարանավարի մասնագիտության և ընդհանուր

առմամբ պետության դրական կերպար ստեղծելու նպատակով: Այս առումով գրադարանների միջազգային գործունեությունը մշակույթի ոլորտում կարելի է անվանել **գրադարանային դիվանագիտություն**: Խոսելով գրադարանային դիվանագիտության մասին որպես հայեցակարգ, թվում է, թե երկուսի միջև տարաձայնություն կա [Козлюк, 2021, 172]: Մինչդեռ գրադարանը որպես կարևոր սոցիալ-մշակութային հաստատություն առաջնահերթ պարտականությունն է համարում գիտելիք տրամադրել և տեղեկատվություն տարածել իր ընթերցողների միջև, մյուս կողմից դիվանագիտությունը զբաղվում է արտաքին հարաբերությունների, քաղաքականության և ռազմավարությունների տրամադրմամբ [Rajesh Kumar Sinha, 2021, 1-6]: Այսօր գրադարանը կազմակերպվում և ղեկավարվում է պրոֆեսիոնալ որակավորում ունեցող գրադարանավարների կողմից, իսկ դիվանագիտությունը ղեկավարվում է վերապատրաստված և որակավորված դիվանագետների խմբի կողմից: Ժամանակակից գրադարանները դիվանագիտությունը օգտագործում են որպես երկխոսության, մտքերի փոխանակման, և խնդիրների լուծման համար: Այսօր գրադարանային դիվանագիտության նպատակների իրականացման հիմնական գործնական աշխատանքը Հայաստանի Հանրապետությունում իրականացնում են հետևյալ հաստատությունները՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, Արտաքին գործերի նախարարությունը, Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչները արտասահմանյան երկրներում, Հայկական գրադարանային ասոցիացիան, Հայաստանի ազգային գրադարանը, որը վաղուց դարձել է մեր երկրի ապրանքանիշը: Ինչպես նաև Սփյուռքի տարբեր երկրներում գտնվող հայկական և ոչ հայկական հայտնի գրադարանները, որոնցում պահվում են հազարավոր մեծարժեք ձեռագիր մատյաններ, գրքեր, որոնք մշակութային, կրոնական և պատմական մեծ արժեք են ներկայացնում, աշխարհին ներկայացնելով հայի լավագույն որակը [Հակոբյան, 2017, 211-234]:

Հայաստանի Հանրապետության գրադարանների միջազգային գործունեությունը կարգավորում է **Գրադարանների և գրադարանային գործի մասին ՀՀ օրենքը**, որտեղ Հայաստանի ազգային գրադարանը, որպես մշակութային հաստատություն. 1) իրականացնում է միջազգային միջգրադարանային բաժնույթի ծառայությունները և օժանդակում է գրադարաններին կազմակերպելու դրանք. 2) իրականացնում է Հայաստանի Հանրապետության գրադարանային հավաքածուի մասին տեղեկույթի տարածում Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և նրա սահմաններից դուրս. 3) իրականացնում է Հայաստանի Հանրապետության գրադարանների մատենագիտական գրացուցակների համակարգում և ձևավորում է միասնական մատենագիտական համահավաք գրացուցակ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով [ՀՀ օրենքը Գրադարանների և գրադարանային գործի մասին, 2012]:

Հայաստանում գրադարանները և մշակութային կենտրոնները լայնորեն պաշտպանված են դիվանագիտության համար՝ որպես գիտելիքի, գրքային փոխանակման և գիտական համագործակցության համար, դառնալով միջազգային համակարգում մարդկանց միջև կապերի և փոխըմբռնման խթանման միջոց: Երկրում գրադարաններն ու դիվանագիտությունն առավել քան երբևէ կարևոր են գլոբալ լուծումներ առաջ տանելու

համար: Գրադարանային դիվանագիտության ավանդական իմաստն է ամբողջ աշխարհում առաջ մղել ազգային շահերը՝ միաժամանակ ստեղծելով երկխոսություն և փոխըմբռնում: Դիվանագիտական նախագծերը, նաև գրադարանային գործի մարքեթինգային սահմանում է, որպես ռազմավարություն՝ ներգրավելու երկրներին, կազմակերպություններին, նպաստելու միջազգային գրադարանային աշխատանքում գործընկերության փոխշահավետ հարաբերությունների: Հարկ է նշել, որ գրադարանային և տեղեկատվական հաստատությունների միջազգային գործունեության համատեքստում դիվանագիտական պրակտիկաները գնալով ավելի հաստատվեցին կիրառվելով «գրադարանային մշակութային դիվանագիտություն» հասկացությունը:

Բացի քաղաքական դիվանագիտությունից գոյություն ունի նաև երկրորդ ուղու դիվանագիտություն (անգլ. Track 2 diplomacy հասկացությունից), այսինքն ոչ-կառավարական, ոչ պաշտոնական կապեր ու գործունեություն մասնավոր քաղաքացիների կամ անհատ խմբերի միջև, հաճախ անվանում են «ոչ-պետական գործիչներ» [Миксюк, 2021, 807-812]: Այս ուղու դիվանագիտությունը օգնում է պաշտոնական անձանց կարգավորել ու լուծել խնդիրները՝ առանց պաշտոնական բանակցությունների անհրաժեշտության: Նախագիծը նախաձեռնություն է, որը թույլ է տալիս մասնագետներին ներկայացնել հայերեն հրատարակությունները, ինչպես նաև այցելել օտարերկրյա խոշոր հաստատությունների գրադարանային և տեղեկատվական ոլորտ, կատարել մասնագիտական փորձի փոխանակում, ձեռք բերել նոր գաղափարներ, նաև հաստատել միջանձնային մասնագիտական կապեր [Հակոբյան, 2017, 211-234]:

Հայաստանի Հանրապետությունում Ազգային գրադարանը հանդիսանում է, որպես մշակութային հաստատություն գրքային մշակույթի ոլորտում միջազգային հարաբերությունների հաստատման, համաշխարհային հանրությանը հայ ազգային մշակույթով հարստացնելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում բնակվող քաղաքացիներին ծանոթացնելու համաշխարհային գրական արժեքներին: Ազգային գրադարանը երկրում գրավոր մշակույթի ինտեգրող տեղեկատվական տարածք է: Գրադարանը համագործակցում է աշխարհի բազմաթիվ ազգային և առաջատար գրադարանների հետ: Միջազգային գրքափոխանակության միջոցով ՀԱԳ-ի հավաքածուները ամեն տարի համալրվում են համաշխարհային և հայ գրականության նմուշներով: Ազգային գրադարանի աշխատակիցները ակտիվորեն աշխատում են գրքային մշակույթի հուշարձաններն իրենց պատմական հայրենիք վերադարձնելու ուղղությամբ, կազմակերպում են գրքերի ցուցահանդեսներ, հանդիպումներ մշակութային, մտավորականության և դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչների հետ, կազմակերպում են միջազգային գիտական միջոցառումներ (կոնֆերանսներ, սեմինարներ, ֆորումներ, և այլն): Ուշագրավ է նաև, որ Ազգային գրադարանի վարչակազմի ներկայացուցիչները արտասահմանյան երկրներում մասնագիտական հանդիպումների և այցելությունների ժամանակ իրականացնում են հայ գրական ժառանգությունը ներկայացնող և երկրի պատմության, մշակույթի մասին տեղեկություն պարունակող հայ ժողովրդի ստեղծագործությունների, գրքերի նվիրատվության և փոխանակման դիվանագիտական արտաքին քաղաքականություն: Սա ևս մեկ անգամ հաստատում է սերտ հարաբերությունները գրադարանի և

դիվանագիտության գործունեության միջև, ինչպես նաև գրադարանային արտաքին քաղաքականության գոյությունը՝ որպես մշակութային դիվանագիտության անկախ ուղղություն [Հայաստանի ազգային գրադարանի կայք]: Ազգային գրադարանը համագործակցում է Հայաստանում հավատարմագրված դեսպանությունների, միջազգային կազմակերպությունների, հայկական սփյուռքի ներկայացուցիչների հետ՝ նպաստելով հայկական տպագիր մշակութային ժառանգության տարածումը աշխարհով մեկ: Պետք է նշել, որ երկրում Ազգային գրադարանի արտաքին քաղաքականության հաջողության գրավականը դիվանագիտության խելացի կազմակերպումն է և իրադրության ճիշտ գնահատումը: Դիվանագիտական գործունեության ձևերը բազմազան են, դրանք են՝ խորհրդակցություններ, դիվանագիտական գրագրություններ, միջազգային պայմանագրերի նախապատրաստում, պայմանագրերի կնքում: Այս առումով Հայաստանի ազգային գրադարանը վիթխարի աշխատանքներ է իրականացնում գրքային հուշարձաններն իրենց պատմական հայրենիք վերադարձնելու ուղղությամբ, իբրև գիտակրթական, մշակութային և տեղեկատվական հաստատություն՝ ՀԱԳ-ը ստեղծում է հայ տպագիր մշակութային ժառանգության հավաքագրման, մշակման, պահպանման և տարածման անհրաժեշտ պայմանները: Հայաստանի ազգային գրադարանը համագործակցում է աշխարհի 40 երկրներից 160 կազմակերպությունների, գրադարանների և անհատների հետ: ՀԱԳ-ի միջազգային գրքափոխանակության մշտական գործընկերներն են Ռուսաստանի ազգային գրադարանը, Ռուսաստանի պետական գրադարանը, ԱՄՆ Կոնգրեսի գրադարանը, Անգլիայի, Ֆրանսիայի, Իրանի, Կորեայի, Լեհաստանի, Ռումինիայի, Բուլղարիայի, Գերմանիայի, Հունգարիայի, Բելառուսի, Ճապոնիայի և այլ երկրների ազգային և համալսարանական գրադարանները:

Հայաստանի ազգային գրադարանի ներկայացուցիչը միջազգային մասնագիտական կառույցներում՝

IFLA (Գրադարանային ասոցիացիաների և հաստատությունների միջազգային դաշնություն) | Ազգային գրադարանների խորհրդի անդամ | Աննա Չուլյան

BAE (Եվրասիայի գրադարանային ժողով) | Փոխնախագահ | Աննա Չուլյան

DLAA (Հայաստանի թվային գրադարանների ասոցիացիա) | Նախագահ | Աննա Չուլյան

DLAA (Հայաստանի թվային գրադարանների ասոցիացիա) | Լիցենզավորման համակարգող | Տաթևիկ Թամազյան

EIFL (Էլեկտրոնային տեղեկատվություն գրադարանների համար) | կազմակերպության Հայաստանյան համակարգող | Աննա Չուլյան [Հայաստանի ազգային գրադարանի կայք]:

Գրադարանը համագործակցում է նաև Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (WIPO), Մետաքսի ճանապարհ գրադարանների միջազգային դաշինք (SRILA), Հասանելի ձևաչափով գրքերի կոնսորցիում (ABC) միջազգային հեղինակավոր կազմակերպությունների հետ: Ազգային գրադարանը նաև 1992 թ. ստեղծված Եվրասիայի գրադարանային վեհաժողովի (ռուս.՝ БАЕ) կազմակերպության հիմնադիր

անդամներից է: Գրադարանի տնօրեն Աննա Չուլյանը ներկայումս ԵԱԵ-ի փոխնախագահն է:

Կարևոր է նաև, ժամանակակից միջազգային թվային կամ էլեկտրոնային դիվանագիտությունը և դրա իրականացման աշխատանքները համաշխարհային սոցիալական ցանցերի միջոցով: Բրիտանացի վերլուծաբան Շ. Ռիորդանն առաջարկել է տարբերակել «էլեկտրոնային դիվանագիտություն», «կիբեռդիվանագիտություն» և «թվային դիվանագիտություն» տերմինները: «Թվային դիվանագիտություն» տերմինով Ռիորդանը նկատի ունի դիվանագիտական խնդիրների լուծման համար թվային գործիքների օգտագործումը [Reshetnikova, 2023, 205-212]:

Ի տարբերություն ավանդական դիվանագիտության, թվային դիվանագիտությունն այլ կերպ է աշխատում նպաստելով գիտելիքների հասանելիությանը, կամրջելով փոխանակումները գիտական հետազոտության և քաղաքականության միջև: Գրադարանների դերը թվային դիվանագիտության մեջ, դա «միջազգային կրթության, հետազոտությունների և նորարարությունների միջոցով երկրների միջև հարաբերությունների ամրապնդման գործընթաց է», այն բնութագրվում է համագործակցությամբ, փոխադարձությամբ, և կենտրոնանում է ընդհանուր գլոբալ մարտահրավերների լուծման վրա: Սա մի հաղորդակցության տարածք է, որտեղ հիմնական ուղիներն են բլոգները, էլեկտրոնային լրատվամիջոցները և գլոբալ սոցիալական մեդիան: Բազմամեթոդական, որակական և քանակական տվյալների ուսումնասիրության մոտեցումը, հեշթեգերի վերլուծությունը հնարավորություն է տալիս հասկանալ սոցիալական ցանցերում բաց հասանելիության դինամիկան, ինստիտուցիոնալ և մասնավոր դերակատարների հնարավորությունները: 2000-ական թթ. աշխարհի խոշոր գրադարանները սկսեցին ձևավորել արտաքին քաղաքականություն և հանրային դիվանագիտություն՝ հիմնված սոցիալական ցանցերի օգտատերերի նախասիրությունների վրա: Հետևաբար, թվային դիվանագիտությունը կարող է դառնալ ժամանակակից գլոբալ խնդիրների լուծման նորարարական գործիքներից մեկը: Սոցիալական ցանցի բովանդակության համեմատական վերլուծության հիման վրա կարող ենք եզրակացնել, որ 2010-2024 թթ. Հայաստանում գրադարանային թվային դիվանագիտությունը զարգացել է որպես գործիք, վերածվելով տեղեկատվական մեթոդների, և արհեստական ինտելեկտի, որը հիմնականում բնորոշ է տեխնոլոգիապես զարգացած երկրների համար [Вклад библиотек в реализацию повестки дня ООН до 2030 года, 2015, 12]: Հայաստանյան գրադարանների մեծ մասը ներկայացված են Facebook սոցիալական ցանցում, այստեղ գրադարանավարը լուսաբանում է իրենց գրադարանի ակտիվ միջոցառումները, առցանց գրքերն ու ցուցահանդեսները: Այսպիսով, գրադարանային դիվանագիտությունը, որն իրականացվում է մասնագիտական, մշակութային, տեղեկատվության և փաստաթղթերի փոխանակման հիման վրա, նպաստում է Հայաստանի Հանրապետության գրադարանային և տեղեկատվական համայնքի ինտեգրումը միջազգային գրադարանային մշակույթի տարածքում: Այսօր վստահաբար կարող ենք ասել, որ Հայաստանում գրադարանային դիվանագիտության շարունակական քաղաքականությունը լիովին համապատասխանում է միջազգային և պետական ծրագրով սահմանված պահանջներին:

Հոդվածի նպատակն է, ցույց տալ գրադարանների մասնակցությունն ու անելիքը գրադարանային դիվանագիտության գաղափարների իրականացման գործում, ինչպես նաև Հայաստանյան գրադարանների գործունեության տեղը միջազգային գրադարանային համակարգում:

Հոդվածի հետազոտությունը դիտարկում է գրադարանային դիվանագիտության հետևյալ հարթությունները՝ 1) **գրադարանները դիվանագիտության մեջ**՝ գրադարաններն ու գրադարանավարները ներգրավված են համաշխարհային քաղաքականության և միջազգային գործընթացներում: 2) **Գրադարաններ դիվանագիտության համար**՝ գրադարանները միջազգային դիվանագիտության համար ծառայում են որպես հարթակներ՝ մարդկանց միջև հարաբերություններ ստեղծելու և մշակութային ըմբռնումն ամրապնդելու համար: 3) **Դիվանագիտություն գրադարանների համար**՝ գրադարանները և այլ շահագրգիռ կողմերը համագործակցում են գրադարանագիտության զարգացման համար:

Այնուամենայնիվ, 21-րդ դարում գրադարանային դիվանագիտությունը տեսականորեն հիմնավորված է գրադարանային պրակտիկայի, գրադարանագիտության, միջազգային համագործակցության և արժեքների առաջխաղացման համար: Այս հետազոտությունը ցույց է տալիս, գրադարանների կարևորությունը որպես միջազգային գիտելիքի երկխոսության առաջնային նպատակ:

Հոդվածի ուսումնասիրման արդյունքում բացահայտվում է 1) գրադարանների և տեղեկատվական կենտրոնների եզակի դերը, որպես ակադեմիական և հետազոտական հաստատությունների միջազգայնացման և դիվանագիտության նպատակ: 2) Ինչպես է գրադարանային դիվանագիտությունը կիրառվում և օգտագործվում Հայաստանում: 3) Ինչպես է դիտարկվում գրադարանի դերը, նպատակներն ու ռազմավարությունները միջազգային հարթակում:

Հոդվածում փորձ է արվում սահմանել գրադարանների միջազգային գործունեության տեղը դիվանագիտության ոլորտում:

Եզրակացություն՝ գրադարանային դիվանագիտությունը, որն իրականացվում է մասնագիտական, մշակութային, տեղեկատվության և փաստաթղթերի փոխանակման հիման վրա, նպաստում է Հայաստանի Հանրապետության գրադարանային և տեղեկատվական համայնքի ինտեգրմանը միջազգային տարածքում: Այսօր մենք կարող ենք վստահորեն ասել, որ Հայաստանում գրադարանային դիվանագիտության շարունակական քաղաքականությունը լիովին համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Գրադարանների և գրադարանային գործի մասին օրենքի շրջանակներում սահմանված ուղղությանը [ՀՀ օրենքը Գրադարանների և գրադարանային գործի մասին, 2012]:

SUMMARY

Diplomacy of library culture, as a direction of the state's foreign policy, implies the exchange of book idea, information, value system, documents, and other elements between different countries and people in order to strengthen the library matter. The term “diplomacy” relates to the ancient Greek word “diploma”, which means “a double-folded document containing official agreements, decisions”.

In addition to political diplomacy, there is also second-track diplomacy, i.e. non-governmental, unofficial connections and activities between private citizens or groups of individuals. It is also important the modern international digital diplomacy and its implementation through global social networks. Unlike traditional diplomacy, digital diplomacy works differently by facilitating access to knowledge, bridging exchanges between scientific research and policy. In the article, an attempt was made to define the place of international activity of libraries in the system of international relations of culture. In addition, to develop the work of libraries with foreign libraries and librarian associations, specialized cultural, informational, educational, scientific organizations and institutions.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. 1. Հակոբյան Հ., Հայկական սփյուռքը հարափոփոխ աշխարհում, Երևան, Հեղ. հրատ, 2017, 650 էջ:
2. Հայաստանի ազգային գրադարանի կայք, [Էլեկտրոնային ազբյուր] URL: <https://nla.am/cooperation> 20.05.2025:
3. ՀՀ օրենքը Գրադարանների և գրադարանային գործի մասին: Ընդունված է 2012 թվականի մարտի 21-ին: [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=75198> , 20.05.2025:
4. Օհանյան Ս., Մշակութային դիվանագիտության նշանակությունը Արցախի դիվանագիտական գործիքակազմում // Գիտական Արցախ, Երևան, «ԱՐՑԱԽ» հրատ., ԱԵԳՄՄ հրատ., 2021, № 3(10), էջ 209-216:
5. Rajesh Kumar Sinha, Library and its use as a Strategic Diplomatic Tool // International Journal of Library and Information Studies, ULTAAP, Хайдарабад, Индия. Журнал индексируется в Google Scholar , Indian Citation Index, pp. 1-6. [Electronic publication] URL: <https://www.ijlis.org/articles/library-and-its-use-as-a-strategic-diplomatic-tool.pdf.pdf> 20.05.2025.
6. Reshetnikova Liudmila M., Samokhina Irina M., Digital diplomacy and social media networks: contemporary practices of innovation in foreign policy // Вестник ВолГУ. серия 4, История. Регионоведение. Международные отношения. Журнал включен в базы Web of Science Core Collection (Emerging Sources Citation Index) и Scopus, Федеральное государственное автономное образовательное учреждение высшего образования «Волгоградский государственный университет», Волгоград. Издательство Волгоградского государственного университета, 2023. Т. 28. № 2, С. 205–212. [Электронная публикация] URL: <https://cyberleninka.ru/article/n/digital-diplomacy-and-social-media> 10.06.2025.
7. Доступ и возможности для всех. Вклад библиотек в реализацию повестки дня ООН до 2030 года. 2015, 24 с. [Электронная публикация] URL: <https://www.ifla.org/wp-content/uploads/2019/05/assets/hq/topics/libraries-development/documents/access-and-opportunity-for-all-ru.pdf> 10.06.2025.
8. Игумнова Н. П., Международная библиотечная деятельность как объект библиотечной политологии, // Библиосфера, Федеральное государственное бюджетное учреждение науки Государственная публичная научно-техническая библиотека Сибирского отделения Российской академии наук (ГПНТБ СО РАН), 2013, N1, С. 3–8 [Электронная публикация] URL: <https://cyberleninka.ru/article/n/mezhdunarodnaya-bibliotechnaya-deyatelnost-kak-obekt-bibliotechnoy-politologii/viewer> . 20.05.2025.

9. Концепт библиотечная дипломатия как составная часть культурной дипломатии Республики Беларусь / Е. И. Козлюк // Литературное наследие России и Беларуси в экспозиционно-выставочном пространстве музеев и библиотек : материалы международной научно-практической конференции, 9 июня 2022 года / составитель Мертенс Е. С., Смоленск; Минск, 2022, С. 29–33. [Электронная публикация], URL: <https://e-catalog.nlb.by/Record/BY-NLB-br0001968260> , 10.06.2025.
10. Миксюк А. С., Культурная дипломатия Беларуси: история и современность // Беларусь в современном мире: материалы XX Международной научной конференции, посвященной 100-летию образования Белорусского государственного университета, Минск: БГУ, 2021, 29 октября, С. 807–812. [Электронная публикация], URL: <https://elib.bsu.by/handle/123456789/286696> 10.06.2025.